

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՌԱՏԱՇԵՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
АРАТАШЕН

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILAGE OF ARATASHEN

N: 81
„02„ „սեպտեմբերի 2013թ.“

Արմավիրի մարզ, գ. Առատաշեն
Հեռախոս (0231) 6-23-28

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Պ-ԸՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013թվականի օգոստոսի 28-ի թիվ 8 նիստի որոշումները:

Առդիր 10 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԱՎԱՐ



Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Այլ գ թիվ 112.10/1975-13
03 09 2013թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

28 օգոստոսի 2013թ.

Թիվ 8 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 29

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի օգոստոսի 28-ի թիվ 8 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիղույան
2. Անուշ Վարդանյան
3. Նելլի Ահարոնյան
4. Գրիգոր Մակարյան
5. Գուրգեն Խաչատրյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար

28 օգոստոսի 2013թ.
Գ.Առատաշեն



Վ.Հարությունյան

1. Շրջագրվելու հաստատում

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

« 28 » օգոստոսի 2013թ.

թիվ 30-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱԾՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնագոյություն ունեցող մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 53-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:


ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՏՆԵՐ՝

Զավեն Ինջիղույան
Գրիգոր Մակարյան
Գուրգեն Խաչատրյան
Նելլի Ահարոնյան
Անուշ Վարդանյան
Ռոման Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2013թվականի օգոստոսի 28
: Առատաշեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԴԱՏՆԵՐԸ
 ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱՐՁՐՈՒ
 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՒՄ 28-Ի

N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքն (այսուհետ՝ համայնք) ունի 3049 ազգաբնակչություն, որից կին՝ 1571, տղամարդ՝ 1478, ընտրողների թիվը կազմում է՝ 2115:
2. Համայնքի վարչական տարածքը կազմում է 967.0 հեկտար:

3. Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 20 կիլոմետր:

4. Համայնքում գործում են՝

1) գյուղապետարան.

2) «Միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

3) «Առատաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ենթակայության բյուջետային հիմնարկ.

4) «Առատաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն.

5) «Հայ փոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունք:

II. ՔԱՌԱՄՅԱԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԵՐԸ

5. Համայնքի քառամյա զարգացման ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) իր մեջ ներառում է 2013 թվականից մինչև 2016 թվականը ներառյալ:

**III. 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

6. Համայնքում 2013 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել՝

1. Ֆինանսական աջակցություն՝ համայնքում նախակրթարանի բացման համար,
2. «Առատաշենի մանկապարտեզ» համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի համար գույքի ձեռք բերման,
3. Համայնքի կենտրոնական փողոցի 700մ տարածքի ջրահեռացման համակարգի և ասֆալտապատ տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքները՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

**IV. 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

7. Համայնքում 2014 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել ոռոգման համակարգի 3կմ երկարության կապիտալ շինարարության/կիսախողովակների տեղադրում/ աշխատանքները՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

***V. 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ***

8. Համայնքում 2015 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել համայնքի մանկապարտեզի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

***VI. 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ***

9. Համայնքում 2016 թվականի ընթացքում նախատեսված է իրականացնել գյուղի խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգման աշխատանքները՝ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների և օրենքով նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՄՅԱ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 30-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի կենսական շահերը՝ համայնքային կառավարման սկզբունքներին ու օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆ




Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N30-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՒԱՆՈՒ



Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ